ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 սեպտեմբերի 2011 թվականի թիվ 123 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով.

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի ղեկավարի հերթական ընտրությունը նշանակել 2011թ. նոյեմբերի 13-ին:

2. Առաջարկել վերը նշված համայնքի ղեկավարին.

Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:

3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.

Ընտրության նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 41 ընտրատարածքային ընտրական, ինչպես նաև համայնքի տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 02
ք. Իջևան